

ԾԱՂԻԿ Կը հրատարակուի Շաբաթ օրերը: — Հա-
տը 40 փարս:

Քաժանորդագին ԿԱՆԻՍԻԿ — Պոլսոյ համար տարե-
կան 45 զրշ: վեցամսեայ 23 զրշ: եռամսեայ 12 զրշ: —
Գաւառացի համար տարեկան 50 զրշ: վեցամսեայ 26
զրշ: եռամսեայ 14 զրշ:

Ռուսիոյ համար տարեկան հինգ ռուբլի: Ուրիշ եր-
կիրներու համար 12 ֆրանք:

Գաւառներէն դրոշմաթուղթ կ'ընդունուի:
Միայն երեք թիւ ապուրկ կը զրկուի: այնուհետեւ
բաժանորդագին չը վճարողը կը դադարի թերթ ընդու-
նելէ:

Մանուցման տողը 2 զրշ:

40 փարս

Ազգային, Քաղաքական եւ Գրական

40 փարս

ԾԱՂԻԿ

Լ Ր Ա Գ Ի Ր

ԾԱՂԻԿ Ի վերաբերեալ ամէն գործի համար դիմել
Առ Տնօրէն-Հրատարակիչ ՅՈՎՆԱՆ Գ. ՓԱԼԱԿԱՇԻԱՆ
Պօլիս, Էսկի-Չապթիէ, Պէրպէրեան Տպարան

درعليه ده اسكي ضبطيه زقاغنده بربريان مطبعه سنده
« زايگ » غزته سي مديري پالاقاشيان حوونان

HOVNAN PALACACHIAN

Directeur du journal arménien « Dzaghik »,
Rue Esski-Zabtié, Imprimerie N. Bérbérian
CONSTANTINOPLE

ՆՈՐ ՇՐՋԱՆ — Ա. ՏԱՐԻ. ԹԻՒ 49

ՇԱԲԱԹ

17 ԾԳՈՍՏՈՍ 1891



ԺԵ. Տ Ա Ր Ե Դ Ա Ր Ձ

ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ

ՎԵՂԱՓԱՌ ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻԼ ՂԱՄԻՏ Բ.
ԲԱՐԵԽՆԱՍ ԿԱՅՍԵՐ ԹՈՒՐԲԻՈՅ

Իմաստուն վեհապետն երբ պահ մի
Խոր անձ բազմապատկելով՝ կարող լինի
միևնոյն ատեն մոռնել իւր երկրի ժողո-
վրդոց ամէն խաւերուն մէջ, ի՛նչ սրտա-
գին գոհունակութիւն պիտի զգայ, իւր
մէն մի քայլին զմայլմամբ լսելով որ ամէն
չրթանց վրայ բառ մը կը թրթռայ. սի-
րեցեալ վեհապետի անունն է այն, դո-
րովալից Հօր բարեաց յիշատակն՝ որ կը
պաշտուի ամենէն մեծ անկեանց մէջ, և
որով կը բաբախին ամենէն երախտագէտ
սրտեր:

Եւ ո՞վ իրաւունք ունի առաւել
զգալ այդ անհուն գոհունակութիւն, քան
Ն. Կ. ՎԵՂԱՓԱՌՈՒԹԻՒՆ ՍՈՒԼԹԱՆ
ՂԱՄԻՏ Բ. որ հետեւելով իւր երջանկայի-
շատակ նախահարց լուսաւոր շուղին, և
յաւէտ իմն փայլելով մեծագործութեանց
ողով, ընդհանուր խնդութիւն կը պատ-
ճառէ այժմ առաւել, շնորհիւ իւր խոր-
հրդոց և ճգանց՝ թուրքիոյ ճակատագրի-
րն միշտ վեհ հանդիսացնելով, և Նորա
միլիոնաւոր ժողովրդոց համար տակաւ
մտնեցնելով հրճուանաց և վայելից դիւ-
թական հեռապատկեր մը:

Այնքան է զարգացումն, իրական է
յառաջդիմութիւնն. իմաստուն աշխար-
հավարութեան մը շունչը կ'անցնի թուր-
քիոյ ամէն վայրերէն, և Արևելք մոգա-
կան բառ մը կը դառնայ նոյն իսկ Եւրո-
պացւոյն շրթանց վրայ: Ուրեմն օրհնու-
թիւն մեր սիրեցեալ վեհապետին, յա-
ւերժական վառք Նորա մեծ անունն:

Խմբագրութիւնն, տկար արձագանգ
հանրային բուն զգացմանց, մանաւանդ
հաւատարիմ և տիրասէր Հայ ազգին, շեք-
մաջերմ մաղթանօք Նորին Կ. վեհափա-
ռութեան թանկագին կենաց արեւշատու-
թիւն կը հայցէ և իւր քաղցրագոյն
պարտքը կը նկատէ գոչել միշտ: **ՎԵՅՅԻ
ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏԻՒԼ ՂԱՄԻՏ Բ. ՄԵ-
ՄԱԳՈՐԾ ԻՆՔԵՆԱԿԱԼ ՄԵՐ:**



— شوکتلو، قدرتلو اب مشفقز پادشاه حميدالحصال و شهنشاه عديم المثال —

— سلطان عبد الحميد خان ثانی افندمر حضرتلرينك جلوس مسعدت مأنوس —

— همایونلری ملابسہ سیلہ دعانامہ احقرانہ مدر —

شوکتکله بيک ياشا ای شهریار پرکرم!
جلوسکله غرق الطاف ایلدک هب جهانی،
عدل و رحمت پر مسرت قیلدی روی آکوانی،
ملکمز باشدن باشه اولدی بر باغ ارم.

ظل اقدس شاهانهك دائم اولسون سایان بقای دولتک در هپ بندکانه ورد زبان.

شمس منیر شوکتک طلوع ایدنجه هان
شب دیجور جهالت عالمدن اولدی نابود؛
هر ذرهده الحق آثار ترقی سر نمود،
هر نقطهده منجلی آینه جود و احسان.

ظل اقدس شاهانهك دائم اولسون سایان بقای دولتک در هپ بندکانه ورد زبان.

کورمه مشدر سن کبی بر پادشه چشم فلک،
کله مشدر عبدلیک زمره اسلافده اصلا؛
نه ممکن وصفکی ایتک فال و قلمله ایفاء،
ذاتکی تجیل ایدر یرده بشر، کوکده ملک.

ظل اقدس شاهانهك دائم اولسون سایان بقای دولتک در هپ بندکانه ورد زبان.

عبد مملوک حضرت پادشاهی
هونان پالاقاشیان

ԳՊՐՈՑ

Իւրաքանչիւր ազգի նոր սերունդն ուսման և գիտութեան մասնակից ընելու համար անհրաժեշտ պէտք է դաստիարակութիւն, և այս պաշտօնը կը կատարէ դպրոցն: Բայց որովհետեւ ժողովրդեան մեծ մասն կարող չէ բարձրագոյն գիտութիւն ստանալ, այս պատճառաւ պէտք է որ դպրոցներն ևս ունենան իրենց տեսակներն, ինչպէս են ժողովրդային դպրոց, միջին դպրոց, գիսական կամ գլխաւի դպրոց, բարձրագոյն դպրոց կամ համալսարան: Ամէն աստիճանի դպրոցի մէջ ևս պէտք է մեծ ուշադրութիւն դարձնել բուն դաստիարակութեան վրայ, այն է, զարգացնել մարդն մտաւորապէս և բարոյապէս, քանզի ամէն դաստիարակութեան նպատակն պարտէ լինել կրթել, լուսաւորել կամքը և միտքը՝ մարդոյ բովանդակ կենաց համար: Բայց մարդն պէտք չէ որ կրթուի լոկ որ և իցէ արհեստի կամ պարապման համար, կամ որ և իցէ աստիճանի համար, այլ ամէն տեսակ դպրոցական շրջանի մէջ ևս պէտք է որ նպատակը լինի բուն կրթութիւնն մաքի, որտի և կամաց, իսկ յատուկ արհեստ կամ պարապմունք ընտրելն միայն յարակից կարող է լինել կրթութեան:

Ժողովրդային դպրոց. — Ժողովրդային դպրոցը ըսելով կը հասկնամք ամէն նախնական դպրոցներ, որոնք ամենակարեւոր են մարդոյ դաստիարակութեան համար: Այս տարրական կրթութիւնն թէ և պարզ ըստ երեւութիւն, բայց էական յոյժ կարեւոր է և մեծ մտադրութեան արժանի: Քրիստոնէութեան ուսումն և ազգային լեզուն պէտք է որ ժողովրդական դպրոցի առաջին առարկայքը լինին: Սորա հետ պէտք է անբաժան աւանդել նաև Մարադուրիւն և Թուաբանութիւն և, եթէ հնարաւոր է, գծագրութիւն, որոյ նշանակաւոր պիտի լինի զարգացնել բնութեան երեւոյթներն լաւ ճանաչելու ընդունակութիւնը: Վերոյդրեալ առարկայից հետ պէտք է աւանդել Աստուծոյ և Պատմութիւն, մանաւանդ աստուծոյ պատմութիւնն և բնական երկրի աշխարհագրութիւն: Սակայն քրիստոնէութեան ուսման և ազգային լեզուն պէտք է որ հպատակին միւսներն: Քրիստոնէութեան ուսումն և մայրենի լեզուն կը կազմեն հիմն մարդկային կրթութեան, և են բանալի ամէն ընդունակութեանց և գիտութեանց: Ս. Գրոց պատմութեան և քրիստոնէական կրօնի ուսումն կը ներշնչէ մանկանց Աստուծոյն ոգևորութիւն: Սուրբ աւանդութիւններն և Ս. Գրոց ոգին պէտք է ուսուցանել և տպւորել մեծ խնամքով: Սակայն ինչ որ պէտք է ի բերան (դոց) ուսուցանել, նախ պէտք է մարմնացնել մանկան մտքի և սրտի մէջ: Պէտք է որ մանկան կրօնական սնակութիւնն զարգանայ, բացուի, և այս ունակութիւնը զարգացնելու համար պէտք է որ աւանդուի նաև եկեղեցական երգեցողութիւն, կանխաւ երգոց խմատները բացատրելով: (1) Մի ընդունակ և քրիստոնէական ոգևորութեամբ ուսուցիչ, որ կը սիրէ մանուկներն և ծարաւի է նոցա զարգացման, շատ մեծ արդիւնք կարող է յառաջ բերել դաս-

(1) Հայոց նախնական դպրոցներու մէջ պէտք է ուսուցանել պետական լեզուն [օսմաներէն] և մի եւրոպական լեզու: մեզ համար նախընտրելի է Անգլիերէնը: Եթէ ունենամք միջնակարգ դպրոցներ, աւելի յարմար է այս լեզուներն ուսուցանել նոյն դպրոցներուն մէջ քան թէ նախակրթարանաց:

տիարակութեան գործոյն մէջ և Աստուծոյ օրհնութիւնը ախռել տարածել մանուկ սերունդեան ազագոյն կենաց վրայ:

Մեր ժամանակ, շատեր կ'աշխատին նախնական դպրոցները միջնակարգ դպրոցներու առարկայներով ծանրաբեռնել, կարծելով թէ կը բազմապատկին դաստիարակութեան արդիւնքներն, և ոմանք իսկ կը խորհին կրօնի ուսումն դպրոցներէն հալածել և կամ ամէն ուսումնէն բացել յետադասել զայն: Այսուհետեւ աւելի ժամանակ չահիլ աշխարհային ուսմանց կամ գիտութեանց համար և կամ բազմապատկել նոցա թիւն: Սակայն շատ և շատ սխալ է այս խորհուրդն, քանզի նախնական դպրոցներն խնդրել շատ ուսումնըներով կը նշանակէ ոչինչ ուսուցանել և ամէն ինչ անմարտելի ընել: Բայց յայտնաւոր, առաջի աչաց ունենալով մարդոյ դաստիարակութեան բուն նպատակն, պէտք է որ կրօնի ուսումն դպրոցաց մէջ առաջին տեղը գրաւէ, իսկ աշխարհային ուսումններն անկախորէն աւանդուին իրրեւ երկրորդական: Ժողովրդային դպրոցն եթէ չլինի իսկապէս քրիստոնէական դպրոց և կրօնն ևս եթէ չլինի առաջին առարկայն ուսման, անուշտ կը լինի մի այլակերպ երեւոյթ և հաւաքածոյ ուսման անկապ տարերաց: Ոմանք կը կարծեն թէ պէտք չէ կրօնքն ուսուցանել, այլ պէտք է ըստ կրօնի կեանք վարել և հետեւապէս նոյն ուսումն դպրոցի մէջ մուծանելով և ի բերան ուսուցանելով աւելի կ'անարգուի իսկ մեք կը պընդեմք թէ ոչ միայն պէտք է քրիստոնէութիւնն իրրեւ կեանք համարել, այլ նաև իրրեւ ուսումն զոր պէտք է լրովն ուսանիլ և ամէն քրիստոնէայ ժողովուրդ պէտք է աշխատի որ այս ուսումն մատչելի լինի ամենուն: Մայրենի լեզուի ուսումն ըսելով պիտի հասկնամք ոչ թէ միայն լոկ ուսուցանել խօսիլ և կարգաւ ազդու արտասանութեամբ և իսկական շնորհով (որ շատ անգամ պակաս է տարրական դպրոցաց մէջ), այլ մանաւանդ ծանօթացնել կարգացածին բովանդակութեանը հետ, որ կարող է ազնուացուցիչ և զարգացուցիչ ազդեցութիւն ունենալ: Ընթերցանութեան լաւ գիրքն (կամ բնիք հասկանալի) ամենէ կարեւոր և ուշադրութեան արժանի մանկավարժական խնդիրն է ժողովրդային դպրոցաց համար: Ինչ որ է գրագիրութիւնն հասակաւորաց համար, նոյն է ընթերցանութեան գիրքն մանկանց համար և այնպիսի պարունակութիւն պիտի ունենայ որ զուարթարար և սննդարար լինի ոչ միայն փոքրերուն, այլ և մեծերուն համար: Ընթերցանութեան գրքին պարունակութիւնը պիտի կազմուած լինի կենաց և կեցութեան ամէն պարագայներէն և համաձայն մանկանց հասակին ընդունակութեանը: Այս պարունակութիւնը պէտք է որ լինի բնութեան պատմութեան և մարդկային կենաց ամէն երեւոյթներէն: Ընթերցանութեան գրքի մասնաւոր յօդուածներ պէտք է որ ընտրուած լինին երբեմն ազգային գրականութենէն, երբեմն յատկապէս պատրաստուած այս նպատակի համար որ դաստիարակական հմուտութիւն և ճարտարութիւն կը պահանջէ: Հաւաքածոյն պատրաստուած ընթերցանութեան գրքն անգլալի կերպով այնպէս կը կրթէ մանուկներն, որ անհնարին է նոյն արդիւնքն ստանալ գիտութեան զանազան մասեր աւանդելով և ծանրաբեռնելով:

Ընթերցանութեան գրքին միակ նպատակը պիտի լինի զարգացնել մանկան ամէն տե-

սակ մտաւոր ուժերն: Առաջին ժամանակները կը հոգային միակողմանի կերպիւ միայն կրթել միտքն, իսկ մեր ժամանակներն ընդհակառակը կը ջանան միակողմանի կերպիւ կրթել միայն զգացումն և երեակայութիւնն: Ընթերցանութեան գրքերն խնդրուած կը լինին առականքով, զրոյցներով, առասպելներով, հրաշալիքներով, որով կը ջանան կերակրել մանուկներն քաղցրեղէններով, որ այլանդակութիւն է ճշմարիտ դաստիարակութեան նկատմամբ, վասն զի մեր նպատակը պիտի լինի ոչ թէ միայն բացառապէս զուարճանել մանուկներն, այլ նաև կրթել, զարգացնել:

Ինչպէս որ մանուկները պէտք չէ որ ծանրաբեռնուած լինին ժողովրդային դպրոցներու մէջ մտաւոր պարապմունքներով, նոյնպէս ևս պէտք չէ որ ուսուցչական վարժարանաց ուսանողները ծանրաբեռնուած լինին ծանր պատրաստութեամբ: Այստեղ ևս քրիստոնէութիւնը մայրենի լեզուին և գրականութեան հետ պէտք է որ ուսման գլխաւոր առարկայն լինի բնագաւառի պատմութեան և աշխարհագրութեան հետ: Ուրիշ առարկայներն ևս պէտք է ուսանիլ, բայց պէտք է ուսանիլ հիմնովին, սակաւ և ոչ բազմակողմանաւ: Այն ուսուցիչը որ ամէն բանէ սակաւ ինչ գիտեն և ոչ մին հիմնովին, միշտ պակաս պիտի գտնուի իրենց պարտուց անթերի և իրական կատարման մէջ: Այն օրական աշխատութիւնն որ կը պահանջէ համբերութիւն և հաստատումութիւն որով ուսուցիչն պէտք է ազդէ անձին օրինակաւ, անհրաժեշտ պէտք է ունենալ մտածութեան կեդրոն, որ պէտք է լինի արմատ և հիմն բոլոր գործունէութեան:

Դպրոցական կարգապահութեան մէջ պէտք է խոյս տալ երկու ծայրայեղութիւններէ: Առաջին ժամանակներն մանուկները կը պահէին ստրկական երկիւղի մէջ և դաւազանը շարունակ կը դառնար մանկանց գլուխներուն վրայ: Ուսուցչի իշխանութիւնն բռնաւոր իշխանութիւն էր: Այսօր, մարդասիրական դաստիարակութեան մէջ, ժողովրդային բարեկրթական ճիշդագոյն մէջ, ի դպրոցս կը արիւնջ հակամիտութիւն ապօրէյն ազատութեան: շատերը կը փափաքեն, որ մանուկներն ուսանին միայն զայն, ինչ որ իրենք կամեն, աշխատին միայն այն ժամանակ, երբ փափաք ունենան աշխատելու և որ ուսուցիչն ևս հետեւի մանկանց հաճոյքներուն և հակումներուն, որպէս զի արդեւ չը լինի նոցա մտաց ազատ վարդացման: Սակայն այս խախուտ հիմանց վրայ հաստատուած դպրոցներն դպրոց չեն: Դըպրոցը պէտք է որ հեղինակութիւն ունենայ, որ ամէն ինչ անօրինէ դաստիարակութեան բարձր նպատակի համար:

Ժողովրդային դպրոցն այն ժամանակ միայն կը փայլի իւր ճշմարիտ լուսով, երբ առաջին պայման կը գտնէ ժողովրդեան դաստիարակութիւնը: Ժողովրդեան դպրոցի նպատակը պիտի լինի ծառայել Աստուծոյն օրհնութիւն և մարդասիրութիւն և այս գլխաւորապէս կախումն ունի ուսուցչի արժանաւորութենէն:

Սոյն յօդուածը կը յանձնեմք ժողովրդի խորին ուշադրութեան: Ամէն ոք կը խոստովանի որ թողալին կամ տարրական դպրոցը պէտք ունին հիմնական բարեկրթման և սակայն սոյն խոստովանութիւն միշտ կը մընայ առանց արդիւնաւորութեան: Պէտք է հիմնովին բարեկրթել դպրոցներն, յապաւել ինչ որ անօգուտ ծանրաբեռնութիւն է և յաւելուել ինչ որ տարրական դպրոցներու էական ոյժն և հիմն կը կազմէ: Այն դըպրոցներն որոնք դաստիարակական որոշ նշանակաւ և կանոն չունին, նոքա դպրոց չեն, այլ զուարճութեան և ունայն ժամանակ անցնելու կայաններ: Հաւ է սակաւ և հիմնովին քան թէ բազում խառնակութեան և աննպատակ: Ահա այսչափ ժողովրդական դպրոցի մասին:

(4) Մ Ե Ռ Ե Ա Լ Կ Ի Ն Ը

Հեղինակ՝ ՕԳԹԱՎ ՖԵՕՏԻԷ .

Թարգ . ՄԻՀՐԱՆ ԹԵԼԵԱՆ

ՊԵՌՆԱՌԻ ՕՐԱԳԻՐԸ

Թո՛ղ իւր հնարագիտութեան զիս խորհրդակից ըրած չլինէր , աղկից աւելի բնական բան չկար , զի գիտէր թէ պիտի չհաւանէի : Կ'ըմբռնէի եթէ ուզած լինէր պարծիլ թէ պիտի յաջողէր մինչ ամուսնութեան կնքումն յառաջ մղել թիւրիմացութիւնը զոր գաղտնապէս կը հաստատէր Գուռթհէօզենց և իմ մէջ , վասն զի մի կողմանէ Գուռթհէօզենցն չափազանց բարեկիրթ անձինք էին և չափազանց զգոյշ ժամանակէն առաջ ուղղակի հարցումներ ընելու համար ինձ՝ սկզբանց և ապագայ յոյսերու վրայ , միւս կողմանէ ես ալ չափազանց բարեկիրթ էի չլիրաւորելու չափ իւրեանց գաղափարներն և ամպարչտութիւն չբարոգելու համար իրենց և կամ որ և է անձի քով : Ինչ որ ալ լինի , ամենափոքր դիպումս մը պիտի բաւէր ի դերն հանելու հօրեղորս խղճալի դիւանագիտութիւնը , ինքնին կը մեկնէի ուրիշն այն անձկութիւններն որոց մատնուած կը անհետէի զինքը :

Յանդիմանեցի հօրեղորս , բայց մեզմիւ յանդիմանեցի . վերջապէս հօրս եղբայրն է . երկուստարքի մը համար դառն է արդէն ծերունի մը թերութեան մէջ գտնել և անոր շփոթութիւնը տեսնել : Հօրեղորս ըստ կարելոյն ինքզինքն արդարացուց այդ ամուսնութեան նկատմամբ յոյս տուած չափազանց եռանդեան համար : Մինչ իսկ ջանաց զիս համոզել թէ կարող էի պարկեշտօրէն օգտուի իւր հնարագիտութիւններէն , քանի որ մասնակցութիւն չունէի անոնց մէջ , վերջապէս առաջարկեց ինձ հաւանութիւն տալ իրեն որ ինքն անձամբ Գուռթհէօզենց երթայ և ամէն ինչ խոստովանի : Մերժեցի , զի իրաւունք ունէի կասկածելու թէ մի գուցէ կատարեալ անկեղծութեամբ չկատարէ զայդ խոստովանութիւն : Ուզեցի գրել ծովակալին . Ահա նամակս զոր հօրեղորս յանձնեցի :

« Սիրելի Ծովակալ ,

« Պահ մ'առաջ այնքան անակնկալ և այնքան անպատշաճ եղանակաւ բաժնուեցայ Ձեռնէ որ դուրսէ կասկածեցաք ողջմտութեանս վրայ . վայրկեան մ'ինձ այնպէս թուեցաւ թէ խելքս կը թռչէր : Նախ և առաջ՝ այս մասին թողութիւն պարտիմ խնդրել Ձեռնէ և կը փութամ՝ այսու գրութեամբ խոնարհաբար խնդրել զայն . միանգամայն կը պարտիմ Ձեզ բացատրութիւն մը և զայդ ալ ամենայն անկեղծութեամբ պիտի տամ :

« Կարծեմ թէ նոր բան մ'իմացուցած չպիտի լինիմ Ձեզ , սիրելիդ իմ ծովակալ , յայտնելով թէ ի՞նչ էր Ձեզ գիտելուս պատճառն : Որչափ առաւել ճանչցայ զօրիորդ Ալիէթ , նոյնչափ առաւել ըմբռնեցի թէ ըստ հաճոյս նա կարող էր կեանքս երջանիկ կամ դժբաղդ ընել : Այդ էր գաղտնիքը զոր կ'ուզէի մտերմօրէն Ձեզ հաղորդել , պաղատելով Ձեզ միանգամայն որ զգայմանց և ըզձիցս թարգման հանդիսանայիք ձեր հարսին և ձեր եղբորաղջըկան մօտ :

« Սակայն և այնպէս այս գաղտնեացոյ յայտնութիւնը չթանցս վրայ կանգ առաւ , ծովակալդ իմ , երբ ձեր խօսակցութեան ոճն զեկոյց ինձ յանկարծ այն տարօրինակ թիւրիմացութիւնն որ , առանց իմ գիտութեանս , սպրդած էր մեր մէջտեղ : Անհնարին զարմացմամբ տեսայ թէ իմ աղնիւ հօրեղորսս առ իս տածած սէրէն և այնքան պատուարեր ամուսնութեան մը մասին իւր ճշմարիտ փառասիրութենէն դրդեալ , կարծես ակամայ ձեր աչաց առաջ զիս նկարագրած էր պնձեալ ճաշակօք որք իմն չեն և յատկութիւններով զորս չունիմ : Եթէ մարդ իւր փափաքած արժանիքը ձեռք բերելու տէր լինէր , չիք տարակոյս թէ ինձ պիտի չնորհէի այն ամէն յատկութիւններն որք կարէին զիս առաւել արժանի ընել օրիորդ տը Գուռթհէօզի : Բայց դժբաղդաբար այդպէս չէ : Հաւատքն , զոր օրինակ , մեր կամքէն կախում չունի : Այս գլխաւոր կէտին վրայ , ինչպէս նաև առաւել երկրորդական խնդրոց մէջ , հօրեղորսս իւր իղձերն իրրե իրականութիւն հա-

մարած է : Առանց երկդիմի խօսքերու պարտիմ ձեզ յայտնել , ծովակալդ իմ , թէ կրօնի մասին դարուս և գիտութեանց շունչը փչած է իմ , ինչպէս նաև ժամանակակցացս վրայ և կատարելապէս բնաջինջ ըրած է զայն : Գալով գիւղն ապրելու փափաքիս և Բարիզէն հեռանալու գիտաւորութեանս , հօրեղորսս երևակայութեան և սիրոյն մէջ միայն խնդրոյ առարկայ եղած են ցարդ :

« Դառն է ինձ մտածել , սիրելիդ իմ ծովակալ , թէ մի գուցէ այս խոստովանութիւնքս բնաջինջ ընեն յոյսեր որոց ոգւով չափ յարեալ էի : Բայց երբեք երջանկութիւնս ստութեան պարտիլ չեմ ուզեր : Եթէ ունիմ մեծ թերութիւններ , գէթ կեղծաւորութիւնը նոցա մասը չը կազմէր :

« Գրեթէ անօգուտ է ըսել ձեզ , ծովակալ , որ եթէ հարկ է ինձ հեռանալ , դուք պիտի որոշէք մեկնելու վայրկեանս : Պատրաստ եմ վաղն իսկ մեկնիլ , եթէ կը բաղձաք : Ձեր հրամանաց կ'սպասեմ ո՛չ առանց խորին անձկութեան , այլ ակնածու հպատակութեամբ :

« . տը Մօնթօնէ տը Վօտտիգուս . »

Սպասուոր մը այս երեկոյ իսկ ի վառավիլ գնաց նամակս յանձնելու . դարձաւ առանց պատասխանի :

Մասնաւոր լրարեր մը այս առաւօտ հետեւեալ պատասխանը բերաւ ինձ ծովակալէն .

« Սիրելիդ իմ Դերակոմս ,

« Ձեր նամակն ինձ անձնապէս ամենադառն զարմանք պատճառեց : Առանց գիտնալու և առանց կամենալ գուշակելու հարսիս , ո՛չ ալ եղբոր աղջկանս գիտաւորութիւնները , համարում և սէր կը տածէի առ ձեզ և ձեր հօրեղորս տեսած երազն զիս ալ գգուելէ հեռի չէր : Պէտք չունիմ ձեզ վստահացնել , սիրելիդ իմ դերակոմս , թէ այն համարումն և սէրը զոր ունէինք ձեր վրայ , մնայուն են , իսկ երազին գալով , ձեզ չափ անկեղծ լինելու համար , պարտիմ յայտնել թէ յետ այսու , սոսկ յիշատակ մը լինելու է այն ձեզ համար : Իմ համոզումս սա է թէ խնամութեանց յուսեցոյններն անոնք են յորս բարոյականի տարբերութիւն կը գտնուի ամուսնոց միջև : Արդ , ըստ իս , կրօնական դաւանութիւնք բարոյական կենաց նոյն իսկ հիմն կազմելով , այսպիսի էական կէտի մը վրայ եղբորաղջկանս հետ ձեր կատարեալ անհամաձայնութիւնն անանցանելի անդունդ մը կը դնէ ձեր երկուքին մէջ :

« Առանց աւելի ծանրանալու այս կէտին վրայ , պարտիմ յաւելուլ թէ շատ զարմանալի պիտի լինէր , եթէ այս պարագային մէջ աղգականացս , ինչպէս և անձնական զգացմանցս թարգման չլինէի :

« Ջայս ձեզ զեկուցանելէ վերջ , սիրելիդ իմ դերակոմս , չեմ ըմբռներ թէ ինչո՞ւ յանկարծօրէն պիտի խոյս տայիք իրրե յանցապարտ մը , ինչ որ չէք բնաւին , ոչ իսկ իրրե մերժուած թեկնածու մը , ինչ որ չէք նմանապէս : Քանզի իրօք դուք մեզ ո՛ր և է առաջարկ չէք մատուցած և ո՛չ ալ հետեւապէս մերժուած : Եթէ կը հաճիք , կրնամք ենթադրել թէ դուք կը պատկանիք բողոքական յարանուանութեան կամ իսրայէլեան կրօնին : Թէև նըմանօրինակ եղելութիւն մը՝ մեր երկու ընտանեաց մէջ տեղն ամուսնութեան ամէն խորհուրդ ի բաց կը վանէ ի սպառ , սակայն բնաւ արգելք չի դնէր այն յարաբերութեանց զորս յաւէտ երջանիկ պիտի լինէինք անչէ՞լ պահել սիրելի դրացւոյ մը հետ , որքան ժամանակ որ հաճելի լինէր իրեն այս երկրին մէջ իւր բնակութիւնն երկարել :

« Կաթոգին սեղմելով ձեր ձեռքը , կը խնդրեմ , սիրելիդ իմ դերակոմս , որ հաճիք ընդունիլ խորին յարգանացս հաւաստին :

« Մովսիկալ Պարոն տը Գուռթհէօզ . »

Եթէ ծովակալին ըսածը լաւ կ'ըմբռնեմ , կ'երեւի թէ ի վառավիլ կը բաղձան որ յանկարծակի մեկնմամբ գաւառին մէջ չարաբանութեանց տեղի չտամ : Կ'ուզեն որ մեր յարաբերութիւնք յանկարծ խզուելու երևոյթը չ'առնուն , այլ ինքնաբերաբար լուծուելու : Թող այդպէս լինի : Մերձակայից լուր պիտի տամ թէ մըտադիր եմ տոտն և հինգ օրէն Բարիզ դառնալ և այդ միջոցին մերթ ընդ մերթ ըստ սովորականին Գուռթհէօզենց տունը պիտի երևիմ : Եւ այսպէս ինքնին պիտի ցրուին մտադրեալ ամուսնութեան տարտամ աղմուկներն :

(Շարունակելի)

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՍԱՄՈՒԷԼ ՋՕՆՍՆ

(Samuel Johnson)

Ճօնսընի՝ անգլիական գրականութեան մատուցած ծառայութիւնն լաւ ըմբռնելու համար անհրաժեշտ է ծանօթանալ իւր ապրած ժամանակի հետ։ Ներկայ և նախորդ դարուց կենաց միջեւ գտնուած տարբերութիւնն հասկնալու համար ստիպուած եմք դիմել պատմութեան։ Եւ արդարեւ 18րդ դարու այս նշանաւոր մարդու՝ գրագիտի՝ կեանքն ինքնին կրնայ համարուիլ մանրանկար մը ժամանակակից անգլիական կենաց։ «Պատմութեան բուն նպատակն է ցուցունել մեզ թէ ինչպէս կ'ապրէին մարդիկ» կ'ըսէ Քարլայը, և ըստ այդմբուն իսկ ժողովրդեան մէջէն մարդ մը առնելով և իւր կենացը այլ և այլ կողմերը դիտելով, ուսումնասիրած կը լինիմք ժամանակակից պատմութիւնն։

Ընդհանուր պատմութեանէն կը սովորիմք թէ ԺԲ դարն աշխարհի այլևայլ մասանց մէջ փոփոխութիւններ պատրաստող ժամանակամիջոց մ'էր։ Գաղիական յեղափոխութիւնն դեռ չէր բարձած մեռելային կայունութիւնն որ կը տարածէր համայն եւրոպայի վրայ։ Այս դարն ունէր կրօնք առանց հաւատքի, քաղաքագիտութիւն՝ առանց պատուոյ և կեանք առանց բարոյականութեան։ Այդ ժամանակի ընկերային վիճակն գրեթէ հասած էր ծայրագոյն վատթարութեան և սպալականութեան։ Ժամանակակից բարեկարգիչ մը, Ճօն Ուէսլի, կ'ըսէ թէ ամէն շաբաթ մի քանի պատանիներ կ'ախաղան կը հանուէին գողութեան համար, և ոճրագործներու փողոցներէ անցնին հազիւ երբէք կը գրաւէր ժողովրդեան ուշադրութիւնն, այնքան վարժուած էին տեսնել այդ տեսակ դէպքեր։ Ուրիշ պատմագիր մ'ալ կը վստահացունէ զմեզ թէ Անգլիոյ մայրաքաղաքն Լոնտոն իսկ միշտ վտանգի ենթակայ էր։ Գողութիւնք և մարդասպանութիւնք ժամանակին սովորական դիպաց կարգէն էին։ Ժողովրդային խիղճն այն աստիճան անզգայ էր որ մինչ իսկ Հուայթֆիլտի նման մէկն անպատուութիւն չէր համարեր գնել գերիներ իւր որբանոցին համար։

Դժուար է արդարեւ հաւատալ թէ Ճօնսընի ատենի այս Անգլիան միայն հարիւր տարուոյ հեռաւորութիւն ունի մեզմէ։ Բաժանման ժամանակագրական անջրպետն փոքր է։ Բայց ընկերային անջրպետն անչափելի։ Ճօնսըն և Ուէսլի ԺԲ դարու բարոյական կրօնային փրկիչներն եղան։ Հեղինակաց համար Անգլիոյ ամենէն դժուարին դարն էր այս։ Կը պատմուի թէ Ճօնսըն և ուրիշ գրագէտ մը անգամ մը ստիպուած էին ամբողջ գիշերն պտըտելով անցունել, որովհետեւ յետին ծայր աղքատ լինելով, պառկելու տեղ մ'ունենալու անկարող էին։ Բայց, կ'ըսէ Ճօնսըն, իրենք իրենց երկրին համար կը խորհրդակցէին, ապագայն կը վճռէին իրենց համոզմամբ։ Եւ իրօք երկրին ապագայն վճռեց ԺԲ դարու այս նշանաւոր դէմքն՝ Ճօնսըն, որուն կեանքը աւելի մօտէն քննել կը դառնամք այժմ։

Սամուէլ Ճօնսըն ծնած էր 1709ին հայրը՝ գրաւաճառ՝ սովոր էր խանութը փակել քաղաքին մէջ տեղի ունեցած տոնավաճառի ատեն և տոնավաճառի հրապարակին մէջտեղն գրաւաճառութեամբ պարապիլ։ Այս ըստ ինքեան աննշան կէտն յիշելով հետեւեալ մի-

ջադէպը պատմել է նպատակս։ Օր մը պատանի Սամուէլն չհաւանիր հօրը հետ կենալ հրապարակին մէջ գիրքերը ծախելու համար։ Անպատուութիւն կը համարի և կամ տեսակ մը հպարտութիւն կ'զգայ թերեւս ուստի և հայրն անօգնական կը թողու այդ օրն և կը հեռանայ տոնավաճառէն։ Այս դէպքէն ճիշդ յիսուս տարի ետքն՝ օր մը Ճօնսըն կը հրաւիրուի նշանաւոր տիկինէ մ'որ կը բընակէր իւր ծննդավայրին մէջ, ուր և պատահած էր վերոյիշեալ դէպքն։ Առաւօտուն կանուխ տունէն կը հեռանայ Ճօնսըն առանց կանխաւ խնայ տալու տանտիրուհւոյն։ առ այս հետեւեալ իմաստիւ ուշադրութեան արժանի բացատրութիւնը կուտայ Ճօնսըն։ Այդ վերոյիշեալ առաւօտէ յիսուս տարի առաջ իւր հօրը դէմ գործած որդիական անհնազանդութեան յանցանքն իւր խղճին վրայ բեռ մ'էր եղած։ տոնավաճառին մէջ հօրը հետ գրաւաճառութեամբ պարապիլ իւր պատուոյն դէմ բան մը համարած էր։ այդ յիշեալ առաւօտն սակայն կ'երթար քաւել այդ յանցանքն։ Ճօնսըն կ'երթայ քաղաքին միւսնոյն հրապարակին վրայ կը կանգնի ժամերով, գըլուխը բացած և աչերն ի գետին խոնարհած՝ շուրջը գտնուող քաղաքիւթեան ծաղու առարկայ դառնալով։ Այս միջադէպ ապաքէն լաւ ցոյց կուտայ այս մեծ մարդուն յատկանիշն։ Իւր այդ ընթացքով ո'չ միայն իւր խղճի խայթը կը մեղմացնէր, այլ և անուղղապէս կարեւոր դաս մը կուտար շատ մը հպարտ պատանեաց։ Փոքրօքի մէկը չպիտի համարձակեր Ճօնսընի ըրածն ընել։

Ճօնսըն կանուխ հասակէն ենթակայ էր կաղմային տկարութեան։ հայրը տուած էր իրեն ըստ բաւականին լաւ կրթութիւն մը։ Օքսֆորտի համալսարանին մէջ ուսանող էր դեռ, երբ հայրը կը մեռնէր, որով և երիտասարդ Ճօնսըն կ'ստիպուի հեռանալ գըլուրոցէն առանց իսկ վկայական մը ստանալու։ Առանց գրամի, վատառողջ և դժբաղդ վիճակի մը մէջ քսան և երկու տարեկան երիտասարդն իւր աչացը առջեւ պարզուած կը տեսնէր ամբողջ աշխարհն, որ իրեն համար չէր ներկայացներ ո' և է հրապոյր։ Դըպրոցի մը մէջ «կառավարիչ» ի նման պաշտօն մը ձեռք կը ձգէ, որ սակայն իւր բնութեան շատ չէր յարմարեր։ Քիչ մը վերջը գրաւաճառի մը համար գրքեր թարգմանելով կը պարապի։ Ադիկ վերջը 800 ոսկւոյ տէր որբեւայրի մը հետ կ'ամուսնանայ։ այդ գումարով ինքն իրեն դպրոց մը բանալու կը ձեռնարկէ։ հոս ևս աշխարհը երեւել վերջ՝ գրքերու և հանգերձիկնաց ծրարը կ'ապելով, 1736ի մարտին մէջ Լոնտոն կուգայ։

Յիշեցնիք արդէն թէ Ճօնսըն յաճախ ըստիպուած էր անօթի փորով Լոնտոնի փողոցները թափառիլ գիշեր ատեն։ Եւ ինչպէս թեան և աղքատութեան ամէն կողմերը փորձառարար տեսաւ։ Կը գրէր ու կը գրէր սակայն Ճօնսըն։ քսան և հինգ տարի անընդհատ գրեց, ջանալով անշուշտ այդու իւր ապրուստը ձարել։ Հեղինակը այնքան ստրուկ և խեղճ վիճակ մը ունէին Ճօնսընի ժամանակ որ արհեստից այլ և այլ ճիւղերու մէջ անյաջող անձինք վերջապէս կը դիմէին գրականութեան։ հեղինակը և գրագէտը ո'չ միայն չէին յարգուեր ժողովրդեան կողմանէ, այլ և հեղինակ մը լինելն ինքնին անպատուութիւն կը համարուէր։

Ճօնսըն հրատարակեց իւր առաջին գործը, «Լոնտոն» քերթուածն, որ իսկոյն շահեցաւ

մի քանի գրաւաճառաց համակրութիւնն հեղինակին համար։ Ապա յաջորդաբար հրատարակեց այլևայլ գրութիւններ «Gentleman's magazine»-ի մէջ։ այդ միջոցին արտադրած իւր գլխաւոր գործը կրնայ համարուիլ «Մարդկային բաղձանաց ունայնութիւնը»։

Երկու տարի շարունակ (1750—1752) գըլուրէն առանց արտաքին օգնութեան ինքն իրեն խմբագրեց «Rambler»ը, որ հանգիսի ձեւով կ'երեւէր շաբաթի երկու անգամ։ Վեց տարուոյ դադարէ մը վերջ վերստին կ'սկսի խմբագրել «Idler» անուն պարբերականն, որ կը հասնի մինչև 103 թիւն։ Ճօնսընի անունն սերտիւ կ'ապուած է վերոյիշեալ երկու հանգիսից հետ։ Իւր յօդուածներ անցած են շատ մը տպագրութիւններէ, և այդ հնօրեայ հանգիսից մէջ Ճօնսընի արտայայտած բարոյալից գաղափարներն և վեհմ գրութիւններ ամենամեծ հետաքրքրութեամբ կը կարդացուին ներկայ ժամանակի մէջ, յորում պարբերական հրատարակութեանց թիւն պարզապէս լէզէն մ'է։

«Fatter» անուն հանգիսին մէջ ևս մեծ գեր մը ունէր Ճօնսըն։

Պարբերական հրատարակութեամբ պտրապած ատեն Ճօնսըն կը պատրաստէր նաև իւր ամենէն նշանաւոր գործն՝ «Բառարան Անգլիարէն լեզուին»։ Անգլ. լեզուն բառարանի մեծ պէտք ունէր անտարակոյս։ Ճօնսընի պէս կարող և գործող մէկը պէտք էր լրացնելու համար այդ պահանջ։ Սոյն գործը պատրաստելու համար հեղինակը կ'ընդգրկէր մը 1575 ոսկւոյ վճարում մը պիտի ստանար։ Գործին պատրաստութիւնը սակայն Ճօնսընի կարծածէն շատ աւելի երկար տևեց։ Եօթը տարի շարունակ պարապեցաւ սոյն բառգրքի պատրաստութեամբ, ստիպուած լինելով միանգամայն վարձել օգնական գրագիրներ ու ընդօրինակիչներ։ այսպէս ուրեմն անհատական չէ կարծել թէ բուն հեղինակին գրական փոքր մաս մը միայն մտաւ վերոյիշեալ կոկիկ գումարէն։ Ճօնսընի այդ բառարանն իւր թերութիւններովն հանգերձ հրաշալիք մ'է, երբ յիշեմք թէ որպիսի դժուարութեանց ենթակայ էր հեղինակն։ Ճօնսընի բառարանն անգլ. լեզուին անգրանիկ և անընդափան բանալին էր։

Ճօնսընի մնացեալ գործոց ոմանց վրայ համառօտակի մի քանի խօսք միայն առ այժմ։ «Rasselas» ապիսիւսեան ճամբորդութեանց սիրուն պատմութիւն մ'է։ մօրը մահուանը վրայ Ճօնսըն ամբողջ շաբթուան մը գիշերները յատկացուց Բասէլասը գրելու, գրքին բերած դրամով մօրը թաղման ծախքը հոգալու համար։ Բանաստեղծից կեանքն յիշատակութեան արժանի գործ մ'է։ Միլտոնի վրայ խօսած ատեն գիտեցինք արդէն թէ Ճօնսըն տեսակ մը թշնամութիւն ցոյց կուտայ «Դըրախտ կորուսեալ»-ի անմահ հեղինակին դէմ։ Այլապէս սակայն, սոյն գործն ևս կ'արժէ յանձնարարել անգլ. բանաստեղծներու կեանքն ուսումնասիրողաց։


Գալով Ճօնսընի ոճին, մէկ խօսք բաւ կը համարիմք։ Մաքօլէյ, Դարլայլ ամենաբարձր գովեստիւք կը խօսին Ճօնսընի մասին։ առաջինը գովելով իւր գրական ոճն, և երկրորդը պաշտելով նորա պարզած բարոյալից գաղափարներն։ Ճօնսընի ոճն իրեն նախորդաց ոճէն բոլորովին տարբեր է։ մինչ զի Ճօնսընեան բացատրութեամբ մկրտած են իւր ոճն։ Ճօնսընի գործերը կարդալով մարդ իսկոյն կը տեսնէ թէ հեղինակն մեծ երկար բառեր գոր-

ծածեղու մասնաւոր միտում մը ցոյց կուտայ. այդ պատճառաւ էր արդարեւ որ իրեն ժամանակակից գրագէտ մը՝ Կոլտմիրթ՝ անգամ մը սուր գիտողութիւն մը ուղղեց իւր ոճին համար:

Ճօնսընի կենաց վերջին մասն կատարեալ հակապատկեր մ'էր առաջնոյն: Երկար ատեն խեղճ ու թշուառ և աննշան կեանք մը վարելէ վերջ, իւր հասուն տարիքին մէջ բազմէր կ'սկսի ժպտիլ իրեն: 1765ին օրինաց վարդապետի (L. L. D.) պատուոյ աստիճանն ըստացաւ Տըպլինի համալսարանէն, և աղկէ իրր տասն տարի ետքն ալ նոյն աստիճանն ստացաւ Օքսֆորտ համալսարանէն: Յիսուն տարեկան էր Ճօնսըն երբ արքունիքէն տարեկան երեք հարիւր ոսկոյ ամսական մը կը կապուէր իրեն: 1784 դեկտեմբերի 13րդ օրն Ճօնսըն կը փչէր իւր վերջին շունչը:

Կը փակեմք ներկայ գրութիւնը, անգամ մ'եւ կրկնելով Ճօնսընի մատուցած մեծամեծ ծառայութիւններն: Ճօնսընէ առաջ սովորութիւն էր որ ամէն բանաստեղծ կամ հեղինակ ունենար իւր պաշտպանն, որուն քով առաւել կամ նուազ քծնիլ պարտէր, եթէ չէր ուզեր կորսնցնել ապրուստի միջոցն: Շէյքսպիր իսկ ունէր իւր ըրտ Սաութհամթընը, որուն յաճախ ներրողներ կը հիւսէր և անշուշտ ասոր փոխարէն կը վարձատրուէր դրամապէս: Ճօնսըն վերջ տուաւ այդ անպատիւ վիճակին և իւր մահուան միջոցին արդէն իսկ մեծաւ մասամբ վերջ գտած էր հարուստներն իրր և սատար կամ պաշտպան չողորմութեւ սովորութիւնն որ կարծես պէտք մը դարձած էր գրողներուն համար: Ընդհանուր ժողովրդեան գիմեց Ճօնսըն իւր վաստակոցը՝ վարձատրութեան համար և շատ մեծ դժուարութիւններէ վերջն յաջողեցաւ, և այժմ ներկայ սերունդը կը քաղէ ու կը վայելէ Ճօնսընի վաստակոց պտուղն:

Լոնտոն Է. Յ. Տ. Ս.



Ի Մ Ք Ո Ջ Ն Ի Յ

Շա՛ս շու՛ս ուսացի, բռնիկդ իմ սիրուն,
Առանց վերք քալու քո գիրք կողերուն,
Այլ լացիք ըսիր, սիրս է կարեւիւր,
Բայց մընալ ինձ մօտ դու միտք բնեցիք:

Սիրքս քեզ բացի, անցնումս իմ բռնիկ,
Եւ դու վագեցիր գոն յայդ ցուրտիկ:
Ո՛հ, քեքեւ քեւերդ քողի ես ազատ,
Բայց սրէս հեռուն գրքս անապատ:

Քո մեղմիկ վուվուն լըցաւ ցերեպեմակ
Հոգւոյս քիթէն հիւսուած յայդ վանդակ.
Ցաւերուս լեռան ցրտած՝ ըստո՛րտ
Լաւեցիր քնարդ ի ձայն սիրայորդ:

Մնչէ՛, քաւակիկ, կուրծքիս դու ետին,
Անոյս խագեղով ցրուցն իմ յետին.
Նրդէ՛, մինչ դադրած չէ յիս սրտփիւն,
Նրդէ՛, կսքիլ մ'իսկ հոսէ յիս արիւն:

Նրք տեսնես կենայ սրխուր գերեզման,
Սքնարն ուռնացեալ ուռի լալական,
Ե՛կ դարձեալ մընչել ողբերդ այն վրսեմ
Գիւտոյս ի վերեւ քառած ուր ցընջեմ:

Ա. ՀԱՄԲԱՐԳՅԱՆ



ԹՈՒՌՅԻԿ ՆՇՄԱՐՆԵՐ

ՕՐԻՈՐԳ ԱՆԻՍԻ «ԱՂՋԿԱՆ ՄԸ ՍԻՐՏԸ»

Կարդացինք Աղջկան մը սիրքը այն բնական հետաքրքրութեամբ զոր կ'ունենան մարդիկ, երբ խնդիրը ուրիշի մը սիրտը կարդալուն վրայ ըլլայ, մանաւանդ աղջկան մը սիրքը՝ որուն խորը թափանցելու համար բազմակողմանի հմտութեամբ օժտուած ըլլալու է մարդ, որպէս զի կարողանայ զանազանել անկեղծ խորհրդակցել, անզգայն զգայունէն, ժանտը անբիծէն, և վերջապէս քեզի համար բարախող ուրիշի համար դադարողէն: Արդարեւ գործ դժուարին և անկարելի մանաւանդ ներկայ յեղեղեղ դարուս մէջ ուր բնութիւնը, բիւացային յարմար մարդիկ պատրաստելու հարկէն ստիպեալ, յաճախ մէկէ աւելի սրտերով օժտած է գեղեցիկ սեռը, որպէս զի եթէ առաջին տուրեալը անշուշտ էր, երկրորդն հանէ ի հրապարակ, ապա երրորդը, չորրորդը, և այլն, ըստ կարգի, ու այսպէս առանց մէկ անգամէն սնանկանալու, պարզերես դուրս գայ սրտի Պոսայէն: Եւ ո՞ր գործն է այն որ իւր առաջին շրջանին մէջ կատարելագործեալ ըլլայ. ո՞չ ապաքէն Բ. տպագրութիւնները յաւելեալ և բարեփոխեալ են. Գ. ներք սրբագրեալ և ճշխացեալ, Դ. ներք վաւերացեալ կեդրոնական վարչութեան. այսպէս ալ աղջկան մը սիրքը պարզ է իւր առաջին տուրեալին մէջ, յաւելեալ և բարեփոխեալ երկրորդին ժամանակ. սրբագրեալ և ճշխացեալ երրորդ յոստախոսութեան մէջ, իսկ չորրորդին համար եթէ կարելի ըլլար վտերացում մը խելէ ո՛ր է վարչութեան, յայնժամ ակներև պիտի փայլէր թէ աղջկան մը սիրքն ի՞նչ հսկայաքայլ յառաջագիւղութիւն կ'ընէ եղբր սուղ ժամանակի մէջ. այն ատեն երբ մէկը աղջկան մը սիրքն ուզէր, առանց կարգ մը ծանօթ շաղկարատութիւններու, պարզապէս պիտի ըսէր. «Ներեցէ՛ք, օրիորդ, ձեր սրտին քանի՞րորդ տպագրութիւնը կ'ուզէք յանձնել ինձ...»: Արդեօք քանի՞ քանի երիտասարդներ իրր առաջին կլլած են չորրորդ և հինգերորդ տպագրութիւնները. զի ցաւալի է ըսել թէ երկար ժամանակներէ ի վեր առաջին տպագրութիւններն սպառած են:

Գալով Օր. Անիսի գրած Աղջկան մը սիրքն՝ զայն համառօտակի մեր ընթերցողաց ներկայացնելէ յետոյ միայն պիտի ընենք մեր քննադատութիւնները այդ գրքի մասին: Ո՞նի Յարութիւն Վարդանեան, Պօլսեցի վաճառական, ամուսնանալէ յետոյ ընտանեօք ի Պիլէճիկ կը տեղափոխուի՝ Պօլսոյ հրապարակին մէջ կորուսած դրամները հոն չերամբուծուած ծախքով շահելու յուսով. իւր կինը՝ Բուրուլ անուամբ աղջիկ մը ծնանելէ յետոյ կը մեռնի ի Պիլէճիկ. Բուրուլի մօրաքոյրը Պօլիս կը բերէ զինքն: Թիֆլիզի մէջ Աղջ. քանդակ Գեղամօֆ անուն արտաքոյ կարգի հարուստ աղնուական մը զգածուելով իւր մանկամարդ կնոջ մահուանէն, կը թողու հայրենիքը և հետն առած միմիակ զաւակը Տիգրան, կուգայ հաստատուիլ ի Պօլիս. հոս կ'ամուսնանայ Բուրուլի մօրաքոյրը հետ և Բուրուլ ու Տիգրան իրր քոյր և եղբայր ամենայն սիրով կը մեծնան մի և նոյն յարկին տակ, Տէր և Տիկին Գեղամօֆի խնամոց ներքէ: Մի քանի տարի վերջ կը մեռնի Բուրուլին մօրաքոյրը, և իւր դաստիարակու-

թիւնը կը յանձնուի Սօֆի Գուլամարեան անուն օրիորդի մը որ թէև ազնուազարմ, սակայն ծնողացը վաղահաս մահուամբ զրկուելով ամէն հարստութենէ, իւր ստացած բազմակողմանի հմտութեան շնորհիւ՝ իրր տանտիրուհի ամենայն հանգստութիւն կը վայելէ Գեղամօֆի իշխանավայել ապարանքին մէջ և ըստացած թոշակները կը զրկէ եղբօր Գառնիկ Գուլամարեանին, որ գեղարուեստից արձանագործութեան ճիւղին ուսանող է ի Հռովմա: Վշտահար Գեղամօֆ հաւասարապէս կը սիրէ թէ իւր հարազատ Տիգրանը և թէ կնոջը քեռորդին Բուրուլը, և չէ թէ սիրել, այլ կը գուրգուրայ իսկ երկուքին վրայ: Բուրուլի այնպէս հաւատացուցած են որ մեռած է իւր հայրը անհուն ժառանգութիւն թողլով իրեն. ու ինքն ալ բնաւ չկասկածիր ասոր, այլ իբր Գեղամօֆի հարազատը՝ կը վայելէ այն ամէն պերճանքը զորս առատօրէն կը գտնէ իւր տըրամադրութեան ներքէ:

Տիգրան և Բուրուլ մեծցած են այլ ևս և հոգի կուտան իրարու վրայ, այնպէս՝ ինչպէս երկու քոյր և եղբայր: Տիգրան քսան տարեկան է և Գեղամարիա պիտի երթայ Երկրաչափութիւն սովորելու: Գեղամօֆ խորհուրդ մը կը յղանայ իւր ժառանգութեանէն Բուրուլը չգրկելու և երկու հոգեհատորներն ալ երջանկացնելու դիտմամբ կը նշանէ Տիգրանը Բուրուլի հետ. երկուքին նշանածք գոհ են այս կարգադրութենէն. զիրար կը սիրեն: Տիգրան Գեղամարիա հասած է և կը շարունակէ սովորիլ երկրաչափութիւն. իսկ Բուրուլ Սօֆի Գուլամարեանի դաստիարակութեամբ այնչափ կը յառաջանայ որ մի քանի օտար լեզուներ, ընդ որոս և Հայերէնը լաւ ուսանելէ յետոյ, նկարչութեան, ասեղնագործութեան և դաշնակի մէջ առաջին կը հանդիսանայ, իւր գրած մէկ թատերագութիւնը մեծ հռչակ կը շահեցնէ իրեն և ներկայացման ժամանակ ամենաբարձրագոյն կարգի անձանցմէ շնորհաւորութիւններ կ'ստանայ: Տիգրանայ բաժանումէն ժամանակ մը վերջ Հռովմէն կը դառնայ Սօֆիի եղբայր Գառնիկ-Գուլամարեանը իրր առաջնակարգ արձանագործ, և որովհետեւ քոյրը ուրոյն տուն չունի, կը հիւրընկալուի Գեղամօֆի ապարանքը, ուր իւր քոյրը տանը նման ասպնջականութիւն կը վայելէ և հոս կ'սկսի արտայայտել իւր արհեստագիտական հոգին, սիրահարելով Բուրուլի, բան մը որ շատ բնական է այդ կարգի անձանց համար, և մենք կը ճանչնամք շատեր որք իրենց բարեկամներէն ամէն տեսակ երախտիք վայելելէ յետոյ՝ այդ կարգի գծուծ միջոցներով միայն փոխարինած են անոնց բարեաց:

Անիործ Բուրուլ շատ չլինար դիմանալ վտանգին և առաջին համակրութիւնը դէպ ի Գառնիկ կամայ ակամայ կուգայ կը ծալուի կը նստի սրտին մէջ: Մինչ այս մինչ այն, և ահա՛ Տիգրան եւս դարձած է Գեղամարիայէն. Բուրուլ կը բաղդատէ այս երկու երիտասարդները: Տիգրան լուրջ, վէս, ծանրաբարոյ, խստապահանջ, անկեղծ, քննադատ, չափութիւր այն կարգ մը գեղարուեստ կոչուած բաներէն որք մարդուս փորը կշտացնելու երէք երեւոյթ մը չունին. կը փափաքի որ աղջիկները փոխանակ ուսման, թատրոն, դաշնակ, նկար, և այլնով զբաղուէն, տնտեսութեամբ և տանտիրկնութեամբ պարապին իրր ճշմարիտ Գեղամարիայի տիկիներ: Չուզեր ի դէպ թէ՛ անդէպ կրկնել իւր նշանածին:

«ա՛հ, կը սիրեմ գեղը», «նստինք սա հովան-
ւոյն տակ», «տե՛ս, լուսինն իսկ կը ժպտի մեր
սիրոյն վրայ», «կենացս ամենաթանկ վայր-
կեանքը քեզ հետ անցուցած ժամերս են»,
և լին, և լին, իսկ Գառնիկ Տիգրանայ հակա-
պատկերն է. նուրբ ճաշակ ունի գեղարուես-
տից մէջ մի ճիւղին վրայ — թէ և ուսելու
հաց չունի — ամբողջ արհեստագիտաց պատ-
մութիւնները գոց գիտէ, առաջին տեսու-
թեամբ կրնայ զանազանել իւրաքանչիւր սր-
հեստագիտի գործը, սիրտը գեղուն է սիրով,
բնաւ պարզ բան մը չխօսի առանց քաղաքա-
վարական ձեւերով զայն համեմելու. կը քննի
Բուբուլի առջև և երեք օր ծնրադրած կըր-
նայ մնալ անոր գծած մէկ նկարին դիմաց.
վերջապէս է ինչ որ են մեր արդի ֆալախի-
ները: Եւ Բուբուլ կը զոհէ Տիգրանը Գառ-
նիկին:

Լուսի հարուստ խրքըսնի մը ազնիւ է.
գիպուածով յարարեցութիւն կը հաստատուի
Գեղամօֆի և խրքըսնի ընտանեաց հետ.
Լուսի կը կեղծէ այն բոլոր ձեւերն զորս Տիգ-
րան կ'ըզայր տեսնէ աղջկան մը վրայ. Տիգ-
րանայ համակրութիւնը յոյս կը ծագեցնէ
Լուսի սրտին մէջ և այս վերջինը կ'սկսի հե-
տամուտ ըլլալ Բուբուլի և Գառնիկի յարաբե-
րութեանց. երկիցս գաղտագողի ունկնդիր
կ'ըլլայ անոնց՝ իրարու փոխանակած սիրազեղ
խոստմանց, և այսու գինուած՝ հաստատա-
պէս կը մտադրէ ամէն բան տակն ու վրայ ը-
նել ու ամուսնանալ Տիգրանայ հետ, ո՛չ թէ
զայն սիրելուն, այլ անոր շնորհիւ ընկերու-
թեանց մէջ անուն ու փառք շահիլ յուսա-
լուն համար:

Հարսանեաց պատրաստութիւնը կը տես-
նուին. Գեղամօֆի եղբայրը Արգար Գեղամօֆ
կուգայ Թիֆլիզէն կնքահայր ըլլալու Տիգրա-
նայ և Բուբուլի. պարահանգիսի մը մէջ՝ ի
ներկայութեան Բուբուլի՝ Տիգրան մեկուսի կը
ծաղրէ թեթևասովի սերունդը, ընդ որս և
Գառնիկը. Բուբուլ կ'զգածուի. Տիգրանայ
հոգը չէ և բնաւ չնախանձիր երբ Բուբուլ
կը պաշտպանէ Գառնիկ. այլ այնպիսի չք-
մեղանք մը կը գտնէ անոր այս պաշտպանու-
թեան մէջ, որպէս թէ արհեստագիտական
տեսակէտով պաշտպանած ըլլայ զնա:

Լուսի ևս ներկայ է պարահանգիսին. այն-
պիսի անմրցելի ճաշակաւ մը յարգարուած է
հրաւիրելոց համար պատրաստուած սեղանը,
որոյ լոկ նկարագրութիւնը կրնայ հիացնել
զմարդ և այս ամենը կը ծնին Բուբուլի հան-
ճարէն. սեղանին վրայ պաշտօնապէս կը ծա-
նուցուի հարսանեաց օրը և Գառնիկ չկրնա-
լով այլայլութիւնը զսպել, կը քաշուի Բու-
բուլի մասնասենեակը: Բուբուլ ևս քիչ յետոյ
կ'երթայ հոն և կուլան (վա՛խ, վա՛խ, եղբւ՛ր)
երկու գեղարուեստից սիրահարները. Լուսի
անտարբեր չէ անցած դարձածէն և Տիգրա-
նայ նրբութեամբ կ'իմացնէ Գառնիկի և Բու-
բուլի առանձնանալը: Տիգրան միշտ մի և
նոյն վեհանձն մարդն է, բնաւ կասկած մը
չծագիր սրտին մէջ և յաջորդ օրը կը յանդի-
մանէ Բուբուլը՝ անխոհեմութեամբ իւր վրայ
կասկած հրաւիրելուն համար: Բուբուլ կը
խոստովանի ամէն բան և թէ կը սիրէ Գառ-
նիկ և այս պատճառաւ չուզէր ամուսնանալ
իրեն հետ: Տիգրան կատուած է. իսկոյն
տունէն կը վռնուէ Բուբուլը որ կ'իսամեռ կ'իյ-
նայ գետին. Պ. Գեղամօֆ չկրնալով տանիլ
այսչափ վշտերու, հոգին կ'աւանդէ նոյն
վայրկենին:

* *

Բուբուլ Սօֆիի հետ փոխադրուած է Գառ-
նիկի ի Ղալաթիա վարձած մէկ սենեակը և
հոն կը զառանցէ ցաւոց և հեծութեանց մէջ:
Թշուառութիւնը իւր համայն մանրամասնու-
թեամբ պարզուած է մեր գեղարուեստաէր-
ներու բնակարանին մէջ. ո՛չ հաց, ո՛չ անկո-
ղին, ո՛չ տուն և ո՛չ իսկ գործ, բնաւ բան
մը չկայ իրենց երջանկութիւնը խանգարող,
ալ միշտ երջանիկ ու երջանիկ են: Բուբուլ
հազիւ ուրեմն ապաքինած է հիւանդութենէն
և հասկցած է թէ ինքը հինգ փարայ չունի
իրր ժառանգութիւն, սակայն հոգ չէ, դըս-
րոցներու, ծանօթներու, իւր վրայ հիացող-
ներու, զինք ծափահարողներու կը դիմէ գործ
մը գտնելու համար. ամէն տեղէ մերժում,
մերժում, մերժում. նոյնը Գառնիկի և Սօֆիի
համար, որք կը հալին ու կը մաշին Բուբուլի
անօթի ծարաւ մնալը տեսնելով:

Տիգրանայ մէկ նամակին վրայ, Բուբուլի
հայրը Յարութիւն վարդապետն Պիլէճիկէն
կուգայ և Բուբուլը կը տանի հոն, մինչեւ
Գառնիկին դրամ շահիլը սպասելու և յետոյ
հետն ամուսնացնելու համար: Թշուառ է
Բուբուլ Պիլէճիկի մէջ. ամէն ոք կ'ատէ զին-
քը, մինչև իսկ իւր խորթ քոյրը. հայրը նօ-
թի է, չունի դրամ շահելու միջոց. Բուբուլ
մետաքսի գործարան մը կը մտնէ և շահած
դրամով կ'ապրին: Գառնիկի նամակները առ
Բուբուլ նախ սիրազեղ են և շարունակական.
յետոյ աստիճանաբար կը նուազին և հուսկ
յետոյ խիստ ցանցառ ու պաղ, Սօֆիի միջնոր-
դութեամբ՝ Գառնիկ մեծ հասոյթաւորի մը,
Շահապետեանի, քով կը մտնէ բաւական գո-
հացուցիչ թոշակաւ և օր ըստ օրէ կ'սկսի յա-
ռաջդիմել և դրամ շահիլ. տուն տեղ չըտ-
կելէ յետոյ, կը գրէ Բուբուլին որ այլ ևս ա-
մուսնութեան ժամը հասած է և միայն իւր
գալտեանը կ'սպասեն: Բուբուլի հայրը հի-
ւանդ է. չունի ո՛չ տէր, ո՛չ օգնական. Բու-
բուլ ստիպուած է խնամել զնա և կը գրէ
Գառնիկին որ հօրը հիւանդութեան պատճա-
ռաւ իւր ի Պոլիս գալն անկարելի է առ այ-
ժմ: Այս անկարելիութիւնը երկինքէն իջած
պատգամի մը նման կ'ընդունուի Գառնիկէն
որ թեթևասով խղճի բեռներէն, ալ ևս
Բուբուլը չէ թէ սիրել, այլ անոր վրայ իսկ
չը խորհիր և ամբողջ ուշն ու ուրուշը նուի-
րած է իւր սիրով Շահապետեանի դստեր
Մելինէին, որոյ հետ յարաբերութեան մէջ է
ամէն օր: Գառնիկ հարստացած է Շահապետ-
եանի շնորհիւ. գեղարուեստի հոլը վերս-
տին կը բորբոքի սրտին մէջ, ու Մելինէի ար-
ձանը կը չինէ և արձակուրդ առնելով չոր-
պանիէն, իւր Սօֆի քոյրը հետ փարիզ կ'եր-
թայ ուր ցուցահանգիսին կը ներկայացնէ
Շահապետեան Մելինէի արձանը: Արտաքոյ
կարգի տաղանդի մը արդիւնքը կը համարուի
Գառնիկի սոյն գործը և համայն լրագրու-
թիւնն ու արուեստագէտք ներքողեաններ կը
հիւսնէ թէ՛ արձանին և թէ՛ Մելինէին նը-
կատմամբ:

Տիգրան կ'ամուսնանայ Լուսիի հետ. ո՛ւր
է այն պարզասէր, տանտիկին, տնարար աղ-
ջիկը. այս կեղծ յատկութիւններն ի բաց կը
թօթափէ Լուսի և ամուսնանալէ վերջ կ'ըլլայ
պէսամուլ, գեղիւ, անհնազանդ կին մը, և որ
ամօթալին է, սիրային յարաբերութիւն հաս-
տատուելով երիտասարդ Յոյն բժշկի մը, Տօք-
թէօր Ամարէլիի հետ, կը վռնուի Տիգրան
Գեղամօֆի տունէն և երկու ամուսինք կը
բաժնուին: Լուսի հօրը տունը կուգայ, ուր
դրացի հարուստ Ամերիկացի մը զգլխելով

զինքն, միասին փարիզ կը փախչին ու ար-
ւեստահանդիսին մէջ կը հանդիպին Սօֆիի ու
իւր եղբոր Գառնիկ Գուբարեանի:

* *

Բուբուլի հայրը կը մեռնի. առ Գառնիկ
ուղղած նամակները անպատասխան կը մը-
նան. խեղճ աղջիկը բանէ մը անգլեկութիւն
չունի, կուգայ ի Պոլիս այն պահուն ուր Սօ-
ֆի և Գառնիկ իրենց փարիզէ դարձին առ-
թիւ առաջին այցելութիւնը կ'ընդունէին Մե-
լինէի և իւր մօր Տիկին Շահապետեանի:
Բուբուլ ցուրտ ընդունելութիւն մը կը գտնէ
Գառնիկէն որ նախատինք կը համարէր իրեն
Մելինէին առջև խեղճ ու կրակ Բուբուլի մը
հետ տեսնուել: Սօֆիի միտքարութիւնները
անզօր են թշուառ աղջկան վիշտերն ամօքե-
լու, որ պատահաբար բաց թողուած լրագրի
մը մէջ տեսնելով Մելինէի արձանին պատկերն
ու այս առթիւ գրուածները, կը հասկնայ ա-
մէն բան ու Գառնիկին տունէն կ'առնէ կը
քալէ: Գառնիկ նշանուած է Մելինէի հետ.
Բուբուլ ճամբուն վրայ կը տեսնէ Գառնիկն
ու Մելինէն թե թեւի տուած. հոն կ'իյնայ
անկեղծան. հիւանդանոց կը փոխադրուի ու
Սօֆիի խնամօք ապաքինելէ վերջ, կը մտադ-
րէ հրաժեշտ տալ իւր սիրեցեալ վայրերէն.
իրեն կ'ընկերանայ Սօֆի և երկու աղջիկները
Մուշ կ'երթան իրր վարժուհի. հոն կը մեռնի
Բուբուլ սրտի ցաւէ:

Ահա այս է, կը կարծենք, Աղջկան մը սրբ-
սին համառօտութիւնը որուն նկատմամբ մեր
ըսելիքները յաջորդիւ:

Ս Ի Մ Ա Ք

Մ Ի Ր Ի Ճ Ա Ն Ե Ա Ն

ԼԵՋՈՒԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Գիշերօթիկ և Ցերեկեայ

Վաւերացեալ

Ի կրթական Բարձր Նախարարութենէ

Վարժարան, ծրագրի կարեւոր փոփոխու-
թեամբ և ուսուցչական նորանոր կարգադ-
թեամբ առաւել ևս կազմակերպեալ, իւր
7րորդ չրջանն պիտի սկսի յառաջիկայ սեպտ.
2 երկուշաբթի օր: Լեզուաց ու գործնական
կրթութեան կրկին տեսակէտներով այնքա-
նի հաշակ սաացած լեզուաբանական այս միակ
հաստատութիւն, ներկայ չրջանի վերջ, իւր
անդրանիկ ԼԵՋՈՒԱԳԵՏ չրջանաւարտները
պիտի ընծայէ Ազգին:

Տնօրէնն դպրոցը կը բնակի, անձամբ կը
վարէ ամէն գործ ու աշտուրջ հսկողութեամբ
իւր մտածման աւարկայ ըրած է վարժարա-
նին ներքին կեանքն ու բարոյականը: Սը-
նունդը, 2 կամ 3 պնակ, միշտ համեղ ու ա-
ռատ է. սլայմանք դիւրամուտչելի են ըստ կա-
րողութեան:

Աշակերտ տալ փափագող Մեծարոյ ծնողք
կամ պաշտպանք առաւել գոհացուցիչ տե-
ղեկութեանց համար կրնան դիմել Տնօրէնու-
թեան օգոտ. 26է սկսեալ ամէն օր իւր
վարժարանին մէջ ի Գում-գարու Պատրիար-
քարանի փողոց:

14 օգոստոս 91

Հիմնադիր-Տնօրէն

Կ. ՊԱԼԻՍ

Տ. Մ. ՄԻՐԻՃԱՆԵԱՆ

4)

ՇԵՑՔՍԻՐ

ՎԵՆԵՏԿՈՅ ՎԱՃԱՌԱԿԱՆԸ

ԿԱՏԱԿԵՐՔՈՒԹԻՒՆ

ՀԱՆԴԵՍ Բ.

ՏԵՍԻԼ Ա.

ՊԷԼՈՆ. — Սեմեակ մը Բորսիայի քան մէջ .

(Զայն փողերու. — մտնեն Մարոքի իշխանն իւր հետեւորդներովն, Բորսիա, Նէրիսա և այլ սպասաւորք .)

Մարոքի իշխան. — Մի՛ անարգէք զիս գոյնիս համար, միտերանգ հանդերձն ակնախտիդ արեւու՝ որոյ դրացի եմ և մօտը մեծցած . Բերէք ինձ ամենազեկեցիկն հիւսիսի տղայոց, ուր Պեփոսի հօտն հազիւ կրնայ լուծել սառնամանիքն . սիրոյդ համար, իմ և անոր մարմնոյն վրայ բանամք մէկ մէկ հատումներ, տեսնելու համար թէ ո՞րուն արիւնն աւելի փոսորագոյն է . կ'ըսեմ ձեզ, տիկին, այս դէմքս անարեւից քաջերն, և կ'երդնում սիրոյս վրայ, մեր կլիմայի ամենահոգեկեաց կոյսեր սիրեցին զայդ . երբէք չեմ յօժարիր փոխել զայնս, եթէ միայն չկարողանամ յաղթել խորհրդոցդ, ազնիւ դէսոյդ .

Բորսիա. — Ընտրութեան խնդրոյն մէջ չեմ կարող ընթանալ միայն դեռատի աղջկան մը աչաց հաճելի ուղղութեամբ . բաց աստի, ճակատադրիս վիճակահանութիւնը կը զրկէ զիս կամաւոր ընտրութեան մի իրաւունքէն . Բայց եթէ հայրս սահման չդնէր ազատութեանս և իւր իմաստութեամբ չհակառակէր զիս կնութեան տալու անոր որ պիտի յաղթէ ինձ այն միջոցներով, ինչպէս խօսուած է ձեզ արդէն, դուք, մեծանուն իշխան, այնչափ իրաւունք պիտի ունենայիք իմ սիրոյս, որչափ չունենցաւ ցարդ տեսած ձեռնապահանջներէս ո՛չ մին .

Մար. իշխան. — Ծնորհակալ եմ ձեզ առ այդ, խնդրեմ հետեւորար տանել զիս այդ սնտուկներու մօտն՝ փորձելու բաղդս . Յանուն այս սրոյս, որ սպաննեց Սոֆին և Պարսիկ իշխան մը, որ երեք ճակատամարտից մէջ յաղթանակ տարած է ընդդէմ Սուլթան Սուլէյմանի, կարող էի՝ քեզ տիրանալու համար, Տիկին, հայեացքովս կաթուածահարել սոսկմամբ սպառնացող արհաւիրքի աչեր, ի խիզախ քաջութեան գերազանցել աշխարհի մէջ սրտիւ ամենէն անվեհերն, իրենց մօր սրինքէն խլել արջու ձագերն, դեռ աւելին, հեգնել առիւծն՝ երբ հուր կը կտրի որսոյն ետէն . Այլ աւա՛ղ, եթէ Հերակլէս և Լիգաս միասին խաղան ի քուէ (զար), կը տեսնեմք որ բաղդին մեծագոյն թիւը տկարագոյն ձեռքէ կ'ելնէ և Ալիիտէս կը յաղթահարուի իւր ծառայէն . Այսպէս ես եւս, սառնորդըւնելով ի ձեռն կոյր բաղդին, կրնամ թերանալ ատոր մէջ — ի նպատակ նուազ արժանի մէկու մը — և մեռնիլ առ ի վիշտ պարտութեանս .

Բորս. — Պարտիք ընդունիլ ձեր բաղդը, հետեւորար, մի՛ փորձէք բնաւ ընտրութիւն մ'ընել կամ երդու ընցէք ընտրելէ առաջ . եթէ վատ ընտրէք, երբէք ամուսնութեան վրայ չպիտի խօսիք ոչ մի կնոջ . Ուրեմն ջանացէք խոհեմ վարուիլ .

Մար. իշխան. — Կ'ընդունիմ պայմանները, ո՛ն, առաջնորդեցէք զիս դէպ ի ճակատագիրս .

Բորս. — Տաճար երթանք նախ . ճաշէն վերջը յերևան կ'ելնէ ձեր բաղդը .

Մար. իշխան. — Ո՞վ քաղցրիկդ իմ բաղդ, մարդկանց երջանկագոյնը կամ չուսուագոյնը կրնաս ընել զիս .

(Փողերու ձայն . կ'ելնեն) .

(Շարունակելի) Քարգ. Ա. ՀԱՄԲԱՐԳԱՅԹԱՆ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԲ

ԸՆԿԻԼԵՐ, 18 յուլիս. — Թէև գաւառական մանրալերն չունին յաջո ռմանց այնքան կարեւորութիւն, սակայն կան լրեր որք կեդրոնական մայրաքաղաքներու լրերէն աւելի էական են . Գաւառք զգաւառս ընթերցելով՝ աւելի կը հրահանգուին, կ'օգտակուին . Այս և անցեալ տարի մարախի արշաւանքներ Եալովայի կողմերը և չըջակոյ գիւղօրէից արտերը խուժելով մեծամեծ աւերներ գործած են, և ցարդ գործելու վրայ . Ծնորհիւ մեր Վեհ. Սուլթանին կորովակամութեան, Նիկիոմիդիոյ Վսեմ. Միւթէսարաֆը, Գարամուսալի Վսեմ. Գայմագամը, Եալովայի Մեծ. Միւտիւր Էֆէնտին, միանալով իւրտալէնտիկերու Վսեմ. կուսակալին իմաստուն ջանից և կարգադրութեանց, բնաջնջելու վրայ են .

Ըստ որոշման Վսեմ. Մահմուտ Ճէլալէտտին փաշայի, նախ ամէն գիւղէ 5-600 մարդիկ ամէն օր՝ առտուն կանուխ մարախալուքեան կ'երթային . Իսկ այժմ ըստ նոր որոշման՝ անձնիւր գիւղացի ամէն օր գրեթէ մէկմէկ քաջ մարախ ժողովել պարտաւոր է, մինչև որ բոլորովին բնաջնջ լինին մարախը . Մարախը կ'աւերեն պարտէզներն, թթենաստաններն, այգեստաններն, ցորենեղէնները, ընդեղէնները, արմուղէնները, որով երկրին բերոց և արտադրութեանց այնքան աղէտաբեր են որքան սովը, ժանտախտը, հնտախտը և այլ տարափոխիկ մահաբեր ախտերն մարդկութեան համար . Մարախաց երեսէն ո՛չ միայն երկրագործ ժողովուրդն, այլ և կառավարական գանձնապետ կարի կը վնասէ, զի մարախաց արշաւանքը՝ սովու սուրհանդակն ու պնդադեպանն է . Ասոր համար է որ մեր ժողովրդասէր և հայրախնամ Վեհ. Կայսրն ամէն ջանք խնայել չտար իւր պաշտօնէից ի բնաջնջումն այս թեւաւոր և թրուչուն կրծողաց ցեղին, որ նետողաց ազգէն և Աստուածաշնչի անուցայից մանուցայից հրօսակներէն աւելի աւերիչ, աւարիչ են . Սակայն մեր գաւառի Վսեմ. կուսակալ փաշային ուշիմ ուշը կը հրաւիրեմք սա կարեւոր կէտին վրայ ևս թէ, մարախը թէև արդէն բաւականէն աւելի ջնջուած են և ջնջուելու վրայ, սակայն ջնջուածներէն և ջնջուելիքներէն աւելի՝ գալ տարի կրկին բաղմութեամբ վերածնանելու սերմերն հողոյն մէջ արտադրած են, ուստի ջանալու է հողոյն մէջ թաղուած մարախի սերմակոյտերն հաւաքել տալ, որով իրական, վճռական և վերջնական կը լինի մարախաց ջնջումն . Մարախը այժմ սահմանափակեալ են Կէմէլիի քայմագամութեան և Բազարու Միւտիւրութեան վարած գիւղախմբերուն և գաւառակաց մէջ . Զուրացուիր նաև ջանքերն զոր ցցուց մեր Վսեմ. Գայմագամ պէյն, եւս առաւել մեր Միւտիւր պէյն Մէհմէտ Էֆէնտին որ ամէն օր ժողովրդեան գլուխ անցած՝ անձամբ կ'երթար մարախսպաննութեան վայրն և հայրաբար և հեղաբար քաջալերելով ժողովուրդն, կը սիրաշահէր և շահագործել կուտար նոցա գործունէութիւնն .

ԱՐՄԵՆԱԿ

ՆԻԿՈՄԻԻԹՈՅ Լուսաւորչեան և Գայիանեան երկսեռ վարժարանաց տարեկան հարցաքննութիւնք տեղի ունեցեր են յուլիս 14—29 . Քննութեան առարկայք՝ Կրօն. և Եկեղեցական Պատմութիւն, Հայ. Տաճկ. Գաղղ. Լեզուք, Թուար. Աշխարհգր. Սրբ. և Ազգ. Պատմ. Իրազիտ. Գեղագր. և Ընթերցանութիւն . Ուսանողք և ուսանողուհիք յաջող քննութիւն անցուցեր և գոհ ըրեր են հանդիսականներն, մանաւանդ Լուսաւորչեան վարժարանի Մաղիոցի աշակերտք որոնք խիստ լաւ կերպիւ պատրաստուեր են եղեր կարգալու և գրելու, հասկնալու և հասկցնելու և ամբարեր են իրագիտական բաւական պաշար . Օգոստոս կին տեղի ունեցեր է պարգեւաբաշխութեան հանդէս, նախագահութեամբ Արթ. Մկրտիչ վարդ. Աղաւնուհայ և ի ներկայութեան Արթ. Քահանայից դասուն, Թաղ. Խորհրդականաց, տեղւոյն դատական ժողովոյ նախագահ Ֆաիք Էֆէնտին, դատական պատժական ճիւղին ժողովոյ նախագահ Հիւսէյն Ղալիպ Էֆէնտին, Ընդհանուր դատախազ Նուրի պէյն, Թահրիրաթ Միւտիւրի, հեռագրատան Միւտիւր պէյն, դատարանի գիւնապետ Արիֆ Էֆէնտին, երեւելի ազգայնոց և ժողովրդեան երկսեռ բաղմութեան մը . Հոգաբարձութեան երկամեայ պաշտօնավարութեան տեղեկագիրը կարգացեր է Ատենապետ Կարապետ Էֆէնտին Պիպիեան . Առ լուսամիտ ինքնակալն մեր ձօնեալ քաղցրանուագ երգոց ընդմիջմամբ կարդացուեր են երկու Տաճկերէն ձառեր՝ երախտագիտական ջերմ զգացումներ արտայայտող առ Նորին Կայս. Վեհափառութիւն Սուլթան Ապտուլ-Էլ-Համիտ խան . Նախագահ Հայր Սուրբ փակեր է հանդէսը, բարեմաղութելով որ Տէրն անսասան պահէ Իւր Գահուն վրայ Օգոստոսիառ Կայսրն մեր Սուլթան Համիտ խանը, արեւատութիւն պարգեւէ Իրեն և Իւր լուսամիտ նախարարաց .

Ի ՄԱՂՆԻՍԱ ամսոյս Յին տեղի ունեցեր է վերին թաղի Ս. Սանդխտեան աղջկանց վարժարանի տարեկան հանդէսը, որ շարունակուեր է նաև յաջորդ օրը, կիւրակէ . Ատենախօսեր են ուսուցիչ Գրիգոր Էֆէնտին Էօմէդեան՝ դաստիարակութեան վրայ, ուսուցչուհի Օր. Նունէ Վարդանեան՝ իգական սեռի դաստիարակութեան վրայ խիստ գեղեցիկ և սահուն ոճով, վարի թաղի ուսուցիչ Սէրվիլէն Էֆ. Պահարեան, բարձրագոյն կարգի աշակերտ Պ. Գրիգոր Ս. Շահինեան՝ նոյնպէս իգական սեռի դաստիարակութեան վրայ . Աշակերտուհիք յոյժ գեղեցիկ կերպիւ կատարեր են Ս. Սանդխտոյ կուսի ողբերգութիւնը . Սէրվիլէն Էֆէնտինի ատենախօսած պահուն ցաւալի դէպք մը տեղի ունեցեր է ժողովրդէն անկիրթ անձ մը, բողբոջական կարծելով դատենաբանը, կ'սկսի հայոցել և նախաաւել գնա, յայտնելով թէ իրաւունք չունի այդ բեմին վրայ ճառախօսելու, քանի որ հարազատ որդի չէ Հայաստանեայց եկեղեցւոյ, և այլն, և ինքն կը ձերբակալուի յաջորդ օրը . Հանդէսը Պահպանիչ ժողով փակեր է Արժանապատիւ Տ. Գասպար քահանայն . Մեր թղթակիցը գովեստից և հրապարակային չընորհակալութեան արժանի կը գտնէ Հոգաբարձութիւնն՝ իւր անխնայ ջանից համար, և մասնաւորապէս Օր. Նունէ Վարդանեանը՝ իւր անձնուէր աշխատութեանց համար .

ԶՄԻՌՆԻԱ, 9 օգոստ. 1891. — Ամսոյս 3ին շաբաթ գիշեր Ս. Մեսրոպեան վարժարանի պարտիզին մէջ չքեղապէս տեղի ունեցաւ ի նպաստ քաղաքիս Հայ Ընթերցատան և Լուսինեան ընկերութեան տրուած թատերական ներկայացումը։ Ժամը 9ին երկսեռ հաւաքուիւր բազմութիւն մը արդէն գրաւած էր թատերաւայրը, որ կ'ոգեւորէր իսլահանէի երաժշտած խմբին թրթռուն և զուարթ նուագներով։ Թատերախաղին նիւթն էր «Ալֆիլենց Տունը» հետաքրքրաշարժ զաւեշտը, արդիւնք Մեծ. Մատթէոս էֆ. Մամուրեանի փայլուն գրչին, յորում արգոյ հեղինակն մեծ ճարտարութեամբ ի հանդէս կը բերէ ժողովրդային կենաց մի տխուր երեւոյթն, որ է օտարասիրութիւնը՝ իւր տնտեսը և ազգակործան հանգամանքներով։ Կը գովէ և կը դրուատէ ինչ որ զուտ հայութեան հանգամանքը կը կըրէ, ինչ որ ազգային կենաց համն ու հոտն է և ինչ որ մեր էութեան պահպանման ճշգրիտ պայմանն և յատկանիշն է։ Իսկ կը պարսաւէ և կը դատաւարտէ ինչ որ խորթ է և օտարոտի, ինչ որ մանաւանդ Փարիզի կապելաներու գարշ աղտոնութիւնը կը բուրէ։ Հանգիստականք բուռն ոգեւորութեամբ կ'ունկնդրէին և յաճախակի ծափահարութեամբ իրենց գոհունակութիւնը կ'արտայայտէին։ Դերասանը որ Հայ Ընթերցատան և Լուսինեան ընկերութեան վարչական անդամներէ կը բաղկանային, թէ և արհեստին մէջ նարավարժ, բաւական ճարտարութեամբ իրենց դերերը կը կատարէին ի զարմացում հասարակութեան, մանաւանդ քանի մը պարոններ որոնք իրենց ճապով շարժումներով և ծաղրաշարժ խօսքերով բազմիցս յաջողեցան հանգիստականներէ ծափ ու ժպիտ քաղելու։

Սոյն զաւելտին յաջորդեց՝ Պ. Թրեանցի «Էլ աման էլ զաման» կատակախառն երգը, որու կը դաշնակցէր Իսլահանէի նուագաւորը և խումբը մեծ յաջողութեամբ։ Պ. Թրեանցի համբաւն արդէն զինքն ամէն գովեստէ վեր կը դասէ։ Ինչպէս ամէն անգամ, այս տնգամ ևս ժողովուրդը իւր սիրելի կատակերգուն ողջունեց որոտալի ծափահարութեամբ և մինչև որ կրկին ու կրկին երգել չտուաւ՝ իւր եռանդն չափ ու սահման չունեցաւ։ Բայց նոյն գիշեր Պ. Թրեանց ինքզինքն իսկ գերազանցեց։ Իւր մօտալուտ մեկնման գաղափարը կարծես թե և թուի կուտար իրեն։ Իւր մէն մի շարժումն, մէն մի ձև և մէն մի շեշտ ծիծաղներով կ'ողողէր զհանգիստականս։ Գոգցես կարապի երգն էր, հրաժեշտի ողջոյն մը առ Հայ հասարակութիւն։ Ներկայացումն աւարտեցաւ «ՄԵՏԱՊԱՏԻՒ ՄՈՒՐԱՅԿԱՆՆԵՐԸ» կատակերգութեան⁽¹⁾ երկրորդ արարուածով։ Կէս գիշեր անցած էր արդէն, երբ հանգիստականք մեկնեցան գոհ և զուարթ, սլաղան քաղցր տպաւորութիւնով համակեալ։

Հայ Ընթերցատան վարչութեան և Լուսինեան ընկերութեան անդամաց թատերասիրական անձնուէր եռանդն, որ տարիէ մի ի վեր արծարծած է, գովութեան և խրախուսանաց արժանի է։ Սոյն երկուստարգք իրաւամբ ի բաց թողած են բարեգործական նըպատակաւ ժողովրդէն դրամ հանգանակելու (մուրալու) հնացեալ գաղափարը, քաջ գգաւով որ ժողովուրդը սիրով և հաճութեամբ

(1) Ողբացեալ Յ. Պարոնեանի հաշակաւոր երկն սուկէ առաջ կատակերգութեան վերածած էր հինգ արուեստաւ Մեծ. Ա. Տիգրիկեան, նիւթին անհրաժեշտ եղող յաւելումներով։ Մեծ. Տիգրիկեան վարչական թատերասիրաց խմբին։

կը վճարէ իւր դրամը։ Նա մանաւանդ այն ժամանակ՝ երբ քարեգործութիւնը զուարճութեան հետ միացած է։ Ուստի կը յուսամք թէ հասարակութիւնը այսուհետեւ ևս չ'պիտի զլանայ իւր աշակցութիւնը ի յաջողութիւն սոյն թատերախաղերու զորս պարբերաբար հանգիստացնելու նպատակ ունին երկուց ընկերութեանց վարչութիւնը։ Պօլսեցւոյ ու գաւառացւոյ օրինակ մը թո՛ղ լինի սա։

ՀԻՏԻԱ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պատշտաբաշխութիւնք. — Բաղէշի բանտին կեդրոնական քննիչ անուանեցաւ Մէհմէտ էֆէնտի, նախկին գեր-հազարապետ պահեստի զօրաց Սամսնի։ Պուլսնք գաւառակին մարդահամարի պաշտօնեայ անուանած է Մշոյ հաշուակալութեան դիւանի պաշտօնեայնէն Երւքի Նիկէնտի։

Ասիւնաւ. — Սանիյէի Բ. աստիճան տըրուեցաւ Տպագրական Տեսչութեան դիւանի քարտուղարներէն Վէհպի պէյի և Սալիսէի աստիճան՝ նոյն Տեսչութեան պարսկերէն լեզուի գրաքննիչ Վէլէտ էֆէնտի։

— Յունաց Ամեն. Ս. Պատրիարքն Տ. Դիոնէսիոս Ե., որ տասն օրէ ի վեր կաթողաւածահար անկողնոյ կը ծառայէր, երեքշաբթի առաւօտ Ֆէնէրի Պատրիարքարանին մէջ հանգեաւ ի Տէր. Յուդարկաւորութիւնը հայրապետական չքով տեղի ունեցաւ հինգշաբթի օր, նմանը խիստ քիչ անգամ տեսնուած մեծահանգէս արարողութեամբ։ Մարմինը ամբողջեցաւ ի Պալաթը։

— Ումուրճայի ագարակին առեւանգեալ տնօրէն Պ. Բէյմոն արձակուեց է, 5000 ոսկի փրկանքը աւազակաց յանձնուած լինելով։ Սապահ կը կարծէ թէ այս աւազակաց խումբ Աթանասի խումբը չէ։

— Հալէպի նահանգին երկրագործական քննիչ Վահան էֆ. միանգամայն երկրագործական պաշտօնեայ կարգուած է տեղւոյն արքունի ագարակաց։

— Օրտուրի էսկի Բագար գիւղին մէջ ձերբակալուեալ են կէնձողու Մէհմէտ անուն աւազակն և իւր չորս ընկերք, որք չորս տարիէ ի վեր փախստական կը շրջէին։

— Բիֆաթ էֆ. անուն մարդ մը, առեւտրական դասի մը մէջ սուտ երգումն ըրած լինելով, վեցամեայ բանտարկութեան դատաւարուեցաւ։

— Հայրենիք լրագիրն անսայման կերպիւ դադարման դատաւարուեցաւ։

— Թագվիմի Վէգայի պաշտօնական լրագիրն կայս. հրամանաւ ամէն օր պիտի հըրատարակուի երկուշաբթիէն սկսեալ։

— Պրուսայի կուսակալութիւնն առաջարկած է ներքին գործոց նախարարութեան, վերստին որոշել կալուածոց գիները և իրենց իրական արժէքին համեմատ տուրքի ենթարկել զայն, որպէս զի դիւրանայ արոց գանձումն և կանոնաւորի։

— Տիմոթէայի գայմագամ Սաֆէթ պէյի գէմ բողոքներ եղած լինելով, Անգերանուպոլիս կոչուած և Իտալիի ժողովոյն կողմանէ հարցաքննութեան ենթարկուած է։

— Դերմանական գործարան մը յանձն առած է Զրհանկիր զօրաց վաշին համար 1800 տակով շինել հրդեհի չոգեշարժ երեք Զրհաններ նոր դրութեամբ։ Այս գումարին առաջին մասնաւճարը՝ 600 ոսկի՝ յանձնառուին վճարուած է արդէն։

— Տրապիզոնի Ճանիկ գաւառին Թէմէ գաւառակին մէկ գիւղին մէջ երեան ելած երեք կիւրճիներէ և եօթը թուրքերէ կազմեալ աւազակաց խումբ մը տեղական ոստիկանութեան կողմանէ պաշարուելով, անոնցմէ մին վիրաւորեալ և երկուքը ողջ ձերբակալուեալ են, իսկ միւսները տակաւին պաշարուած կը մնան։

— Երկուշաբթի օր մեծ չքով տեղի ունեցաւ Միլլէյէ վարժարանին վիպականաց և մրցականաց բաշխման հանգէսը։ Աշակերտաց թիւն է 357, որոց 197ը միայն կարգ փոխած

են, 37ը կարգ չեն փոխած, և 8 աշակերտ՝ չը կարենալով կարգ փոխել երկու տարի շարունակ՝ ըստ օրինի քամուած էին վարժարանէն։ Շրջանաւարտից թիւն էր 29, որոց մին միայն Հայ, Միլլէյէն էֆ. Միլլէյէն, որ ստացաւ չորրորդ մրցանակ։

— Ձեռնհաս իշխանութիւնը 54000 ոսկւոյ գնած է Վսեմ. Աբրահամ փաշայի ի Պէյքօզ ունեցած ագարակն որ տիպար-ագարակի պիտի վերածուի։

— Դ. զօրարանակին հրամանատար Ձէքի փաշա Կարին ժամանեց է, ուրկից Վանայ և Պաշաղտի կողմերը պիտի երթայ քննական պտոյտ մ'ընելու համար։

— Բալուի Բուշիլլան գիւղացի Գաեա ու եղբայրը Տէրվիշ անուն աւազակք, որք ժամանակէ մը ի վեր կ'սպաւատակեն եղբր, ձերբակալուեալ են։

— Ի Թուրքիա շրջաշարժ գործարաններ հաստատուելու արտօնութիւնը յետ այսորիկ Հանրօգուտ շինութեանց նախարարութենէն պիտի խնդրուի, և ո՛չ Գաղաքապետութենէն։

— Գարասիի գաւառին մէջ վառօդարան մը պիտի շինուի։

— 85 բանտարկեալք, որք իրենց պատժոյն երեք չորրորդ մասն աւարտած են, երկուշաբթի օր պիտի արձակուին Վեհ. Սուլթանի Գահակալութեան տարեդարձին առթիւ։

— Փարիզու Օսմ. դեսպանատան Բ. քարտուղար Ալի Ֆէրուս պէյ՝ Փրանսական Ակադեմիոյ ներկայացնելով իւր աշխատասիրած «Օսմ. Գրականութեան Պատմութիւնը», Օֆիսիէ s'Ահաէմիի աստիճանը շնորհուեց է իրեն։

— Երկուշաբթի օր պիտի սկսի հրատարակիլ Մէարիֆ անուն կրթական շաբաթաթերթ մը, խմբագրութեամբ Սաաէթ լրագրոյ ինժեքագրապետ Նուրի պէյի։

— Պարսկական նորընտիր դեսպան Միրզա Էսաթուլլահ խան մայրաքաղաքս ժամանեց։

— Այս առուր Սապահ կը գրէ թէ, Հայոց Պատրիարքարանին կրօն. և Բագ. Ժողովոյ ընտրութիւնը վաւերացնող պաշտօնաթիւրը Պատրիարքարան հաղորդուեց է, կրօն. Ժողովոյ անդամոց ընտրութեան մասին մի քանի բարեխօսութեամբ և Բագ. անդամակցութենէն հրաժարող Վսեմ. Գաբրէլ էֆէնտի Նորատունկեանի տեղ նոր ընտրութիւն կատարելու յանձնարարութեամբ։

ԾԱՆՈԹԻՒՆԻՔ

Զմիւռնիա. Տ. Հ. Թ. Ս. Ձեր զրկած գրութենէն բան մը չը հասկնալք. «Շարունակութիւն. Բ.» վերնագիրն ունի, «Յերկրորդում առաւօտուով կ'սկսի և կը վերջանայ շարունակելով»։ Կ'երևի որ գրութեան առաջին մասն զրկած էք կանխաւ ու մեր չեմք ստացած զայն։ Ձեր հասցէն։

Մարտու. Հ. Կ. Ք. Ձեր յիշած յուշիս 28 թիւ նամակը չեմք ստացած։

Մալիարա. Ն. Թ. Մեր կամքէն անկախ պատճառաւ չը կրցանք հրատարակել։

Պատշտաբաշխութիւնը նոյն պատասխան։ Խաբեղ. Ս. Յ. Ե. Ձեր անկարկած թերին մուտ գրած է «Մաղիկ» մէջ մերկամէն անկախ պատճառաւ պարտաւորուած եմք այդպէս ընել մինչև ցնոր տնօրէնութիւն։ Պէտք է համբերել։

Մարա. Ն. Չ. Ս. Գաւառաճեանի Հայ բաւարանին բաժանորդագիրը կանխիկ վճարելի է. գործին շարունակութեանը մասին կրնաք ապահով լինել։

ԱՐԺԵՔ ԴՐԱՄԱՍՈՑ			
Օսմ. լրումն 100 զըշ. էն			
Մեծիտիյէ	107 38	Վեցնոց	403
Քաւուրդ մէճիւ	106 30	Մարտի քոյ	89 25
Մանր մէճիւ	102 20	Կարօն	87 25
Մէթալիք	99 20	Կրօնք	51 15
Հինգնոց	101 20	Բագ. լրումն	110 2
Մանկթ ինքնաբերական 10			
Գոնսուլտէ (երեկոյ.)	20	Բագ. լրումն	65 3/4
Թահվիլ. Օսմ. 4 0/10	77	Բագ. լրումն	49

ԱՐՏՈՒՄԱՏԻՒ Ա. ՕՍԿԱՆԱՆ

ՏՊԱԳՐ. ՆՏԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵՆԸ
Իսկի-Ջապիէ փողոց, թիւ 61